

տական պատմության հետև Այս տեսակետից  
գրախոսվող ուսումնասիրությունը որոշակի

հետաքրքրություն է ներկայացնում նաև սովե-  
տական արևելագիտության համար:  
Պատմ. գիտ. գոկտոր Ա. ԳԱԼՍՅԱՆ

Հ. Ա. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ, Մտորումներ Հոմերոսի մասին, Երևան, 1964,  
417 էջ, գինը 1 ռ. 10 կոպ.

1964 թ. Հայկ. ՍՍՏ ԳԱ հրատարակչությամբ լույս տեսավ Հ. Ա. Համբարձումյանի «Մտորումներ Հոմերոսի մասին» մենագրությունը: Ավելի քան չորս տասնամյակ զբաղվելով համաշխարհային դասական գրականության մի շարք խոշորագույն դեմքերի՝ Հոմերոսի, էսքիլեսի, Սոփոկլեսի և էվրիպիդեսի ստեղծագործությունների ուսումնասիրության և նրանց հայացման պորձով, հեղինակը իր կատարած աշխատանքները հանրագումարի բերեց «Մտորումներ Հոմերոսի մասին» վերնագիրը կրող աշխատությամբ:

Այս աշխատությունը ոչ միայն հայ էթնիկայի և հունական ցեղերի մշակութային ընդհանրությունները բացահայտող մի գրական երևույթ է, այլ նաև հոմերագիտությունը հարստացնող մի հետազոտություն, որը տեական և համառ աշխատանքի արդյունք է: Բազմաթանակ ուսումնասիրություններ կան նվիրված Հոմերոսի պորթլեմի հետազոտմանը, սակայն «համապարփակ ունիվերսալիզմով», օժտված հոմերոսյան ստեղծագործությունները շլուսարանված և շհետազոտված հարցերի անսպառ աղբյուր են: Այն հանգամանքը, որ այդ ստեղծագործությունները աղերսվում են հասարակական կեցության ու գիտակցության բոլոր կողմերին, ստիպել է հոմերագետներին Հոմերոսի ստեղծագործությունները ուսումնասիրել բազմակողմանիորեն: Այսուհանդերձ, պետք է խոստովանել, որ շատ ու շատ հարցեր ցարդ մնացել են ստվերում և շլուսարանված:

Գրախոսվող մենագրության 1-ին գլուխը վերնագրված է «Հոմերոսյան իրավագիտակցության սիստեմի մասին»: Այստեղ քննարկված են հոմերոսյան ժամանակաշրջանի հին հունական հասարակության իրավա-բարոյական հիմքերը: Բացահայտված են ընտանիքի նախապատմական և պատմական դարաշրջանների ֆունկցիան, նրա էվոլյուցիան՝ սկսած նրա գոյության ամենապարզունակ ձևերից մինչև զարգացման բարձրագույն փուլը, հոմերոսյան ժամանակաշրջանի հասարակության մեջ մենամուսնության, կնոջ և ամուսնու փոխհարաբերությունը վերաբերող բազմաթիվ այլ խնդիրներ: Սրանց ուսումնասիրումը հեղինակին բերում է հետաքրքիր եզրակացությունների՝ որ հոմերոսյան հասարակության իրավագիտակցության սիստեմը, ծագումնաբանորեն կապված լինելով տոհմային կազմա-

կերպության հետ, օժտված էր աշխարհայացքի դիցարանական տարրերով և խիստ որոշակի «սակրալ սկզբունքներով», և որ այդ իրավագիտակցության հոմերոսյան սիստեմում արդեն նշմարվում էին արդի իրավակարգի «դիֆերենցիվ» սաղմերը:

Հետաքրքրական եզրահանգում է կատարում հեղինակը Հոմերոսի էպոպեան գործողության մեջ գտնվող իրավագիտակցության մի սիստեմ համարելով և իրավագիտակցության այդ սիստեմն ու Հոմերոսի ստեղծագործությունների պոետական բարդ կառուցվածքը փոխադարձ կապի և պայմանավորվածության մեջ դնելով: Այս արդեն նորություն է հայ հոմերագիտության ասպարեզում: Թվում է, թե նորություն է նաև Հոմերոսի էպիկան իրեն բանաստեղծական ձևի մեջ տրված հասարակական իրավահարաբերությունների մի բարդ կոմպլեքս դիտելը:

Այնուհետև Հ. Համբարձումյանը քննարկում է Հոմերոսի պոեմներում առկա երևույթների և գործողությունների բազմապատճառականության հարցը և նշում, որ դիցարանական պատճառականության նկարագրման ձևով էլ Հոմերոսի ստեղծագործությունը տարրերվում է այլ պոետների ստեղծագործություններից: Հոմերոսյան էպիկային հատուկ այս կատեգորիայի բացահայտման կապակցությամբ հեղինակը գրում է. «Բնութագրելով հոմերոսյան պոեմների գրական-գեղարվեստական, գիտա-պատմական և դիցարանական ունիվերսալիզմը, դրանց դիապագուների անընդգրկելի մասշտաբները և հեղինակի մտքի արտահարգ խորությունը, մենք այսպիսով սահմանում ենք հոմերագիտության անհայտ բազմապատճառականության հասկացությունը», մի հասկացություն, որով հոմերոսյան էպիկական արվեստի առանձնահատկությունները բազմակողմանի ուսումնասիրելու հնարավորություն է ստեղծվում: Ահա այդ սկզբունքի կիրառմամբ է, որ «...վերահաս իրադարձությունները պատճառ պատճառի եսեից իրար կապակցելու հետևանքով, ստացվում է գեղարվեստական այնպիսի մեծասքանչ էֆեկտ, որ թվում է, թե այդ իրադարձությունները տեղի են ունենում նույն անխուսափելիությամբ ինչպես ընթացիկ երեվույթները»:

1 Հ. Ա. Համբարձումյան, Մտորումներ Հոմերոսի մասին, Երևան 1964, էջ 67:



Ջայրույթ, քուն, երազ, ահ, խուճապ, կիրք և ամոթ, վիշտ ու կսկիծ, սեր ու թախիծ և մարդկային բազմապիսի հոգեվիճակներ արտասուող այլ հարցեր քննարկվում են ուսումնասիրության «Աստվածների ու հերոսների վարքագիծը» մերնադիր կրող գլխում։ Բազմակողմանիորեն ուսումնասիրելով հոմերոսյան էպիկան, ձամբարձումյանը նշում է, որ Հոմերոսը հին Հունաստանի առաջին թեոգոնիստն է, որ նա տիտուպետել է աշխարհագրական հսկայածավալ գիտելիքների, նրա ազգագրական գիտելիքները, տասնյակ ժողովուրդների ու ցեղերի բարքերի, սովորույթների նկարագրությունները հիմք են տալիս պնդելու, որ Հոմերոսի «Իլիական» և «Ոդիսական» պոեմները հնագույն ազգագրության հարուստ աղբյուր են։ Այստեղ առկա տիեզերական արեգակնային սիստեմի բազմաթիվ տվյալներ և տեղեկություններ վկայում են հոմերոսյան յուրատեսակ տիեզերագիտության մասին։ Հոմերոսը հմուտ է նաև իր հերոսների և կենդանիների ֆիզիոլոգիական նկարագիրը տալիս։ «Չսամանափակվելով այսքանով,—նշում է Հ. Ա. Համբարձումյանը,— մենք կարող ենք նշել նաև, որ Հոմերոսի ստեղծագործության մեջ արտացոլված է նաև տրամաբանական գիտությունը»։ Տրամաբանությունը իրեն տեսական դիսդիպլին առաջին անգամ մշակել է Արիստոտելը, բայց էմպիրիկ տրամաբանությունը իրեն մարդկանց գիտակցության մեջ գործող մտածողության մեթոդների միակցություն, իհարկե գոյություն է ունեցել նաև առաջնորդում։ Հոմերոսը իր պոեմներում ծավալում է հենց այսպիսի՝ ճանաչողական արվեստի բարձր աստիճանին հասցրած էմպիրիկ տրամաբանության արիստեմա<sup>2</sup>։ Նման եզրահանգումը հեղինակի կողմից հիմնավորվում է պոեմներում առկա տրամաբանական կոնկրետ հասկացությունների և կատեգորիաների ցուցադրմամբ։

Հոմերագիտությանը շատ է զբաղեցրել «Իլիական»-ի ու «Ոդիսական»-ի մեկ հեղինակի միասնական ստեղծագործություն լինել-չլինելու հարցը։ Սկզբնապես Հոմերոսի հեղինակության փաստը անառարկելիորեն ընդունվել է։ Հետագայում՝ XVIII դարում, Հոմերոսի պոեմների ծագման ու կոմպոզիցիայի հարցերը արծարծվել են օխտոդական դիրքերից։ 1795 թ. գերմանացի գիտնական Վոլֆը հրապարակում է Հոմերոսի պոեմների մասին իր աշխատությունը, որտեղ անդամահատվում է հոմերոսյան պոեմների միասնական օրգանիզմը։ Դրանից հետո «Իլիական»-ն ու «Ոդիսական»-ը հռչակվեցին իրեն

տարբեր հեղինակների գրչին պատկանող և ներքին միասնությունից ու կապից զուրկ, բազմաթիվ մանր գրույցներից կազմված պոեմներ։ Այս տեսակետի դեմ հանդես եկան Նիլը և ուրիշներ, որոնք պաշտպանեցին ու հիմնավորեցին պոեմների ամբողջականության և միասնության սկզբունքը։ Տեսական այս վեճերի հիման վրա էլ սկիզբ են առնում երկու իրարամերժ տեսությունների բազմաթիվ տարատեսակներ։ Համբարձումյանի մենագրության մեջ առանձին մի գլուխ նվիրված է հոմերոսյան պոեմների հասակի, միասնության, Հոմերոսի անձի և կենսագրության պրոբլեմների քննարկմանը։ Հեղինակը փաստացի նյութի հիման վրա փորձ է անում ճշտելու մեծ պոետի ծննդյան թիվն ու տեղը, հերքում է այն կարծիքը, թե Հոմերոս անունը սոսկ ֆիկցիա է և «ժողովրդի մտածողության մեջ հղացած սիմվոլիկա»։

Համբարձումյանը փորձում է նաև հերքել «մանր պոեմների. միջուկի» տեսությունները, որոնք հոմերոսյան ստեղծագործությունները անդամահատում, տրոհում, բաժանում էին ներքին կապից զուրկ առանձին մասերի։ Համբարձումյանը վիճարկում է դրանց դեմ, կոչվան ունենալով հենց իրենց՝ այդ տեսությունների կողմնակիցների տվյալներն ու փաստարկումները, նաև այն անհաշիվ փաստերն ու ապացույցները, «որոնց առաջադրումն ու մեկնաբանությունը կազմում են մեր սեփական հայացքի շարադրանքները. այսպես 1. «Իլիական»-ում ցրված իրավագիտակցության ինդիվիդուալ տարրերը իրենց էությունամբ են միմյանց, միասնական են և խոսում են այն մասին, որ նրանց հեղինակը մեկ որոշակի անհատ է։ 2. Պոեմների գեղարվեստական արտահայտչական միջոցների միասնությունը ևս մեկ անհատ ստեղծագործողի տաղանդի կնիքն է կրում։ 3. Պոեմների լեզուն ևս հանդիսանում է, որպես մեկ միասնական հեղինակի մտածողության իսկությունը»։

Վերոբյույալ բոլոր փաստարկումները և բազմաթիվ այլ ապացույցներ, որոնց անդրադառնում է նա մենագրության մեջ, հիմք են տալիս Հ. Համբարձումյանին հաստատելու Հոմերոսի ստեղծագործության մեկ հեղինակի պատկանելը, մեկ միասնական ամբողջություն լինելը։

Հետաքրքրական է մենագրության «Հայկական կուլտուրայի և էթնիկայի տարրերը հոմերոսյան էպիկայում» գլուխը, որտեղ հեղինակը բացահայտում է Հոմերոսի պոեմների

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 166։

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 210։



լեզվա-պատմական երևույթների և հայ ժողովրդի պատմության կենցաղի ու լեզվի միջև եղած առնչությունները: Համբարձումյանը ընդգծում է, որ հնում սերտ կապ է գոյություն ունեցել «Հոմերական սիստեմի և փոքրասիական ժողովուրդների մշակույթի միջև»: Դրա համար հիմք են ընդունվում պատմական նշանակություն ունեցող շատ տվյալներ, որոնք ապացույցներն են այն բանի, թե Փոքր Ասիայում ապրած հելլենները հիմնավորվել են այնտեղ ղեռնա միկենյան դարաշրջանից: «Ահա այս հիմնախարսխի վրա էլ,—նշում է աշխատության հեղինակը,— հունական դիցարանությունը իր հիմնական կողմերով աղերսվում է Մերձավոր Արևելքի և Միջերկրական ծովի երկրների ժողովուրդների կրոնա-դիցաբանական սիստեմին»:

Աշխատության մեջ հեղինակը քննարկում է նաև խեթական և ուրարտական մշակույթների և հոմերոսյան դիցարանական աշխարհի առնչությունները և հանգում է այն եզրակացության, որ հերոսական դարաշրջանի հին հունական և միկենյան ու տրոյական մշակույթների բանաստեղծական վավերագրերը հանդիսացող հոմերոսյան էպիկայում հաստատապես արտացոլված են խեթական հնագույն կուլտուրայի զանազան տարրերը: Հոմերոսյան սիստեմի և ուրարտական մշակույթի համապատասխան տարրերի համեմատական հետազոտությամբ հեղինակը անում է սույն հետևությունները.

ա) խեթական ու հոմերոսյան սպառազինության ընդհանուր կառուցվածքն ու յուրահատուկ տարրերը (մարտակառքեր, նիզակներ, սրեր, դաշույններ, աղեղներ ու նետեր) փոխադարձաբար նման են: «Իլիական»-ում նկարագրված կավագործությունը նման է ուրարտականին, իսկ Աքիլլեսի վահանը՝ Ֆրոմենի որդի Ռուսայի վահանին:

բ) Ուրարտուի բազմաստվածությունը, ինչպես և հոմերոսյան աստվածածագումը բխում են միևնույն հիմունքներից:

գ) Ուրարտական և միջերկրածովյան ու միջինասիական ժողովուրդների մշակույթների միջև գոյություն է ունեցել ծագումնաբանական կապ:

դ) Հոմերոսյան սիստեմին ծագումնաբանորեն մոտեցող ուրարտական մշակույթի առավել էական պայմանը եղել է դիցարանական իրական գիտակցությունը և դրանից բխող աստվածապետական իշխանությունը, ինչպես նաև կրոնա-իրավական կազմակերպությունը:

Մենագրության հեղինակը հետազոտությանն յուր ի դարձնում հունական և հայկական մշակույթների կապի՝ բանասիրության մեջ բազմիցս քննարկված հարցը: Հ. Համբարձումյանն այստեղ սոսկ կրկնող չէ հնուց ի վեր ասված և ընդհանուր ճանաչում գտած դրույթների: Հունական աստվածաբանական սիստեմի և հայկական առասպելաբանության բաղդատման հանապարհով նա դարձյալ իր խոսքն է ասում: Բերելով բազմաթիվ զուգահեռներ, նա նշում է «աստվածների համընդհանուր ֆունկցիաները», որոնք, ըստ Հ. Համբարձումյանի, հնագույն պատկերաքումների համաձայն նշանակալից մասով եղել են նույնական: Այստեղ հատկապես պարզվում է, թե ժողովրդական մտածողությունը ինչպիսի ընդհանրություններ է ստեղծել Հոմերոսի դուցազներգությունների ու հայկական աղբյուրների միջև: Հոմերոսի դուցազներգության մեջ և հայ աղբյուրներում ֆուլկլորային և էթնիկական բնույթի ընդհանրություններից Համբարձումյանը անդրադառնում է հետևյալներին.

Ըստ Հոմերոսի՝ կինը ամուսնու լավագույնընկերն է: Կնոջ նկատմամբ նույնպիսի դիրքորոշումը առկա է նաև հայ հին իրականության մեջ, կինը դիտվել է որպես «տան ներսի պատ» և «տղամարդու կյանքը»:

Արհեստների նկատմամբ հոմերոսյան հասարակարգում եղել է մեծարման և դրվատելի վերաբերմունք, մինչդեռ առևտուրը հարգանք չի վայելել: Մեր ժողովրդի մտածողության մեջ՝ «փեշակն օր կա, օսկի բիլագուկ ա», իսկ «առևտուրը հերն ու մեր շունին»:

Ընտանիքը, օջախը հունական և հոմերոսյան հասարակարգում գիտակցվել է որպես սրբություն: Հայ իրականության մեջ ևս նա պաշտամունքի աստիճանի է հասցվել. «օջախդ չ'են կենա» օրհնել են այսպես, իսկ մեկին անիծելու համար ասել են՝ «օջախդ քանդվի»: Հյուրին հոմերոսյան հույները դիմավորել են «հյուրին Զևսն է հովանավորողը», հայերը՝ ժողովրդի աստծուն ևս խոսքերով:

Այս և ուրիշ կենցաղային, տնտեսական և ֆուլկլորային զուգահեռներով բացահայտվում են բազմաթիվ ընդհանրություններ:

Մենագրության մեջ կան նաև դրույթներ, որոնց հետ դժվար է համաձայնվել: Սակայն չնայած դրան, հանգուցյալ պրոֆեսորի աշխատությունը հետաքրքիր գործ է և անշուշտ կընպաստի հայ համերազմություն հետազոտողների:

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ